

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ

Խօսք ընդ Աստուծոյ

ՈՂԲ ԱՌԱՋԻՆ

Տէ՛ր, ես հիմա, քեզի կու դամ
Ձղջումն առած քուրճ մազեղէն.
Կողէս արիւն կը հոսի տաք,
Մեղքի նիղակն է հոն խըրած:
Հողիս կախած մութ ամպերէն,
Շանթի նըման, որ փայլ չունի,
Ես հուր կ'ուզեմ, կիզանուտ լոյս.
Շիթ մ'հեծեծանք, սրտի մորմոք.
Հառաչանքի ծով ալեկոծ,
Որ կապտաջուր Վան կը կոչուի:
Լոկ դուն կրնաս հրաշաղործել,
Հերձնուլ խաւարն իմ խոկերուս.
Որ ճենճերի եւ բարձրանայ,
Աղերսանքիս ձայնը խորին:
Թող ինձ մարմին, արիւն ըլլայ
Աստուածութիւնըդ մարդացած.
Ա՛հ, քիչ մը դութ, թեւ մը խաչէդ
Որ Գողգոթայ ելլեմ քեզ հետ:

ՈՂԲ ԵՐԿՐՈՐԴ

Ո՞վ ափ մը կաւ զանդեց, տալով
Ինձ կենդանի ձեւ ու մարմին.
Աչքեր տուաւ, անափունք ծով,
Փըչեց ինձ շունչ իր սուրբ հողին:

Ես հող էի եւ եղայ մարդ,
Ձերդ շափիւղայ շաղով լեցուած.
Անհունութեան դեղեցիկ զարդ,
Ես բնութեան եղայ աստուած:

Միրտըս լըսեց ձայն մը խորին,
 Փոթորիկն էր ժայռոտ ափին.
 Ես մարդ եղայ սիրող մեղքին.
 Ո՛վ Տէր, հիմա կեանքն ինչ սե՛ւ է:

Պիտի սրփուե՞ս զերդ վըրաս լոյս
 Արիւնոտած քու ծիրանիդ.
 Պիտ՝ այցի դա՞ս իմ հէ՞դ հողւոյս
 Յօղելու ինձ արցունքի շիթ:

Գիտեմ բարի եւ ողորմած
 Քեզ կոչեցին Գիրքերն անցեալ.
 Արքայութիւն ամբողջացած,
 Պիտ՝ առնե՞ս զիս գիրկըդ դարձեալ:

Ո՛հ, մի՛ փշրեր ձեռքիդ անօթն.
 Հոգիս բեկբեկ կերտէ նորէն.
 Մարդ եմ, ո՛վ Տէր, եւ անծանօթ
 Բանասարկուներ զիս կը կանչեն:

Ի՞նչպէս բանամ այս սուրբ էջերն
 Իբրեւ դռներ արքայութեան,
 Եղիբ ինձ Հայր, սէրըդ մօտ բեր
 Որ ինձ ըլլայ կեանք սրբութեան:

ՈՂՐ ԵՐՐՈՐԴ

Այս մութ ժայռերուն, այս ափին խոժոռ
 կը բախի ալիքն, ետ կ'երթայ փրփուր.
 Սեւ սիրտ մը կայ հոն. անունն է Նարեկ
 Ծովէ ծով ինկած լաստափայտ անդեկ:

Ճառագայթ կ'ուզէ, օր անշամանդաղ,
 Օթոց բաղձալի ու տեսիլ խաղաղ.
 Թէ ձեռքդ երկարես կայծ տալու լեզուին,
 Նա կը բըռնկի, բոց կ'ըլլայ կրկին:

Թող ես զոհ ըլլամ ամէնուն համար
 Լըւամ արցունքով ոտք ու ձեռք խոնարհ .
 Թող աչքերս բըխեն շընորհք յորդառատ ,
 Սրտերը փոխուին շուշան անարատ :

Գիտեմ թէ ողբն ալ խունկի բոյր ունի ,
 Թող մարդ մարդու հետ լալով համբուրուի .
 Դու մեզ բաշխէ , Տէր , բարիք անսահման
 Եւ անձրեւական հոսմունք քաղցրութեան :

Տուր ինձ խըրախոյս , երգով տենչանքի ,
 Մատնեքս թող ըլլան տաւիղ տասնադի .
 Ընդունէ , զօգէ իմ երգերս երգիդ
 Ինչպէս նուազներ համայն երկնքիդ :

Ըրէ որ լըսողն հրեշտակի փոխուի ,
 Ինչպէս արտասուք մաքուր զղջումի .
 Տէր , դուն կատարէ ինչ որ ես սկսայ ,
 Որ հոգիդ իմ մէջս իբրեւ լոյս ցոլայ :

ՈՂԲ ԶՈՐՐՈՐԴ

Ես եմ ըստեղծուած հրաշագործ ձեռքի ,
 Սէրը վերնական կոչեցին հոգի .
 Ո՞վ սեւ վարագոյր քաշեց աչքերուս
 Որ այսպէս ոցրամ բեկումն իմ հոգւոյս :

Յնծաց սատանան , տխրեցաւ Աստուած ,
 Անդուռ աւերակ՝ մընացի լքուած ,
 Լաւ էր թէ արփին ինձ չըտար ողջոյն ,
 Երբ բացի աչքերս աշխարհին ժպտուն :

Ի՞նչ հողով ծածկեմ մեղքերս անհամար ,
 Ո՞ր ժայռը քաշեմ սրտիս շիրմաքար ,
 Կը նայիս պայծառ անդունդներ խորին ,
 Կը զննես աստղերն ամպերէն անդին :

Ոստիլ ըսկըսայ, Տէր, մի՛ հեռանար.
Մեղքը դըրախտին մի՛ բռներ պատճառ.
Թող հնչեն յաւէտ քայլերդ երգածայն,
Երբ մեր երկնքէն կ'անցնիս յաղթական:

ՈՂԲ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Այդի տնկեցին եւ ես որթատունկ եղայ նորածիլ.
Ոսկեղէն խաղող խնդրեցին մարդիկ եւ ես փուշ տրելի.
Եկան թռչուններ եւ իմ թեւերու սիրեցին թառիլ,
Բայց հովն անհաստատ թօթափեց ծաղիկն եւ երգն արտոյտի:

Ո՛վ հըղօր Աստուած, որ քարէն աղբիւր եւ մարդ կը հանես
Այդ ես եմ հիմա, ես հողէ շինուած՝ Աստուծոյ պատկեր.
Երբոր ես ծընայ ցնծաց ողջ աշխարհ, շանթ ելաւ բերնէս.
Որովհետեւ դուն խառնեցիր հողիդ ինձ լոյս անըստուեր:

Բայց ինչո՞ւ աչքերս սուղով փակեցի զերդ զիշեր մահուան.
Ես կեանք կը խնդրեմ, հողիով մեռած, մարմնով վիրաւոր,
Օրհնած ջուր ցանէ դարնանային տաք անձրեւի նման,
Որ սիրտըս բանան դարդարուն խօսքերդ մէկը միւսէն նոր:

Գիտեմ թէ ունիմ մեղաւոր ձեռքեր, առանց բարիքի.
Լըւալու արցունք պէտք է միւսանգամ տեղ աւազանի.
Երկնքէն իջած մաքուր պարեգօտ առանց կարանի,
Որ մոմը ձեռքիս հաւատքով մտնեմ սուրբ եկեղեցի:

Ձիս քանի անգամ խաչովդ կանչեցիր, սէրդ ըրիր դրօշակ.
Ես վերադարձայ հոն ուր բանսարկուն կազմած էր հանդէս.
Լայն էր ճանսպարհն եւ հաճոյքն այնտեղ սիրոյ արեգակ.
Ինչո՞ւ սիրեցի մեղքը մահացու խենթ հարբածի պէս:

Քու ձեռքդ է հիմա, անհուն բարութիւն, կեանք տալ վերըստին,
Բանալ աչքերուս դէպի հորիզոն լոյսի պատուհան.
Մարմինիս մասերով կանգնել տաղաւար քեզ տուն հանգըստեան,
Ուր դաս բազմելու հրեշտակներուդ հետ ամէն օր սեղան: